

ժարանին յեղակարծ և տարածամ փոփոխութեամբ Տեսչին... յայտ միջոց ժամանակի լցցէ գտեղի նորա (= այսինքն Առաջիկայութեան) վ. չ. Ներսէս» (Սարգիսեան). (Նմկ. Հիշում. Աբբ.ի առ Գերպ. Եդ. Հիշում. 1860 Հոկտեմբեր 4):

Հիւրմիւզեան Աբբահայր Հ. Ալիշանի փարիզ վերադառնալէն առաջ՝ երբ կը գրէ Մուրատեան վարժարանի «ի մէջ դարձեալ ձեզ տուեալ որպէս աւանդ առժամանակեայ» (գր. 1860 Հոկտեմբեր 6)՝ մեծ ցնծութիւն կը պատճառէ թէ վարդապետաց և թէ սաներուն: Վերջիններս հաւաքական գրով և ամենուն ստորագրութեամբ կը գոչեն. «Ի Քէն, Նախահայր մեր և Տէր, ի Քէն և ի Մեծարելի Երեւոյնտէղ թողաւ միւսանգամ փարիզ գհարբս մերով, և զսէր մեր դարձեալ վերստին ընդ սիրոյ աղբերն խոնել, յորմէ սնանէրն և կենդանանայր: Էւ այնքան մեծ և ծանրակշիռ է յաչս մեր շնորհդ և սէր, որքան մեծ էր և պատուական Անձն նորա և պիտանի Զեզ» (գր. առ Հիշում. Աբբ. [նամակին թուականը կը պակսի. բայց վանք հասած է 1860 Հոկտեմբեր 21-ին]):

3. Ըլլալով վարժարանին Տեսուչը՝ փափուկ խորհուրդով մը շատ դժուարութեամբ զիջած էր այս պաշտօնին. (գր. առ Հիշում. Աբբ. 1859 Փետրուար 8):

4. Իր վերջին ամիսները հիւանդութեամբ կ'անցընէ հոն, և հուսկ Պոլիս կը զրկուի՝ միասին տանելով աւարտավարժ աշակերտներն ալ:

## Ե

### ՓՈԽ-ՏԵՍՈՒՋ

### Հ. ՕՔՍԵՆՏԻՈՍ ԳՈՒՐԳԵՆԵԱՆ՝<sup>1</sup>

1861 ՍԵՊ. 10 — 1865 ՕԳՈՍՏՈՍ 4<sup>2</sup>

|              |                                                                                                                                                                      |
|--------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐ | Հ. ՊԵՏՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ՝ 1861 Սեպտեմբեր 10 — 1867 Օգոստոս 19 (ցմահ):                                                                                                      |
| ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏ  | Հ. ՕՔՍԵՆՏԻՈՍ ԳՈՒՐԳԵՆԵԱՆ՝ <sup>3</sup> 1861 Սեպտեմբեր 10 — 1865 Մայիս (7), — Հ. Հմայիակ Պապիկեան՝ 1865 Մայիս 10 — 1870 Յուլիս 24:                                     |
| ՄԱՏԱԿԱՐԱՐ    | Հ. ԳՐԻԳՈՐԻՍ ՄԵՐՃԱՆՃԵԱՆ՝ <sup>4</sup> շար. ց1873:                                                                                                                     |
| ՈՒՍՈՒՑԻՋ     | Հ. ՍՈՒՔԻԱՍ ՊԱՐՈՆԵԱՆ՝ շար. ց1864 Յուլիս 10 <sup>5</sup> :                                                                                                             |
| ԱՇԽ. ԵՂԲԱՅՐ  | ԵՂ. ՅՈՎԱԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ՝ շար. ց1862 Յունուար 20, — ԵՂ. ՄԿՐՏԻՋ ՊՈԼՍԵՑԻ՝ 1862 Ապրիլ — ԵՂ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱՐԱՅԵԱՆ՝ 1861 Յուլիս 10, — Նոյմը՝ 1862 Յունուար 20 <sup>6</sup> : |

### ԿԱՐԵՒՈՐ ԵԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հոս առաջին և վերջին անգամն է մեր այս երկասիրութեան համար՝ որ պիտի հանդիպինք — ըլլայ Մուրատեան ըլլայ Ռաֆայէլեան վարժարաններու տեսչական կազմերուն մէջ — շրջանի մը՝ որ բացառաբար կազմուած է Փոխ-Տեսչի մը անմիջական պաշտօնավարութեան տակ:

Որքան որ Հ. Ալիշան Միաբանութեանս Առաջիկայ ընտրուելէն վերջ՝ դեռ պիտի շարունակէր ժամանակ մը իր տեսչութիւնը, ինչպէս իր կարգին ըսինք, սակայն անպաշտօն շրջանակներու մէջ արդէն հանրային կարծիքը ինքիւն բողբուած կը թուէր որոշ անուան մը շուրջ՝ իբր ընտրելի տեսչութեան: Ահա այդ առիթն է որ կը հանդիպինք Հ. Օքսենտիոսի անուան. կը գրէ Պոլսէն Գերպ. Եղուարդ Հիւրմիւզեան. «Զգիտեմ յումմէ հռչակեալ է ի քաղաքիս զի Հ. Օքսենտի տեսչութիւն փարիզեան վարժարանին կարգեալ իցէ» (գր. առ Հիշում. Աբբահայր, 1860 Գեղտեմբեր 15): Ժամանակին պահանջը և պարագաները ստիպած էին, որ այդ թուականէն ամիսներ վերջ՝ Ս. Ղազարու վարչական Ժողովը մուտամբ ստուգէր: Մասամբ ըսի, որովհետեւ ըստ օրուան կացութեան յարմարագոյն ընտրութիւն մ'ընելու համար՝ մանաւանդ նկատելով գործող անձերու սակաւութիւնը՝ յետ երկար խորհրդակցութեանց խոհականութիւն կը համարուէր Փոխ-Տեսչի ա-